

**29.11.2022**

**ԿԲ Խորհրդի նիստում**

ՀՀ կենտրոնական բանկի Խորհրդի նոյեմբերի 29-ի նիստում փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում:

Խորհրդի որոշմամբ գրանցվել է «ԱՌՖԻ» ՓԲԸ-ն, վերջինիս տրամադրվել է ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա: Ուժը կորցրած է ճանաչվել «Բերք Գրուպ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 855 լիցենզիան, վերաձևակերպվել են Ա/Ճ Անահիտ Վիրաբյանին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 573 և «ԱՄՍ» ՍՊԸ-ի գրավատնային գործունեության թիվ ԳԳ-Ե 277 լիցենզիաները, «Տիտան-93» ՍՊԸ-ին և «Գոռհակ» ՍՊԸ-ին տրամադրվել են արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ:

---

*Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:*

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

*հեռախոս. (010) 592592-0702*

*էլ-փոստ. [mcba@cba.am](mailto:mcba@cba.am)*

*[www.cba.am](http://www.cba.am)*